Հավելված N 1

«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2021-56» ծածկագրով հրավերի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի

Չ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավորի գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման	
									հասցե	ժամկետ
1	24311530	Ջրածնի պերօքսիդ		Ջրածնի պերօքսիդ՝ H2O2 30 - 40 %, ГОСТ 177-88 համապատասխանություն: Օգտագործվում է տարբեր նոսրացումներով ախտահանման համար, անգույն թափանցիկ հեղուկ է, պահպանվում է մութ, զով, չոր պայմաններում: Ֆիրմային նշանի առկայություն: ՀՀ օրենսդրությամբ սահմանված, արտադրող կազմակերպության սերտիֆիկատների, քիմիական նյութի որակին ու պահպանման պայմաններին վերաբերող փաստաթղթերի օրիգինալ տարբերակների առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին: Մատակարարումը 1 - 5 լ տարողությամբ հերմետիկ տարաներով:	լ			60.00	ք.Երևան, Դ.Մալյան 37	Պայմանագրի / Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում
2	24451111	Ցիպերտրին կամ Ցիպերմետրին 25		Միջատասպան միջոց 25% ցիպերմետրինի հիման վրա, որպես սպանիչ նյութ: Սպեցիֆիկ հոտով, արտաքինից թափանցիկ դեղինից շագանակագույն գույնի կոնցենտրացված էմուլսիա է, ջրում լուծելիս դառնում է կաթնագույն: Փափեթավորումը հերմետիկ գործարանային 1-5 լիտրանոց տարաներով: Պիտանելիության ժամկետը՝ առնվազն 2 տարի: Մատակարարման պահին անհրաժեշտ է պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն:	լ			20.00	ք.Երևան, Դ.Մալյան 37	Պայմանագրի / Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում
3	24451190	Կրծողասպան միջոց «Շտորմ» (կամ համարժեք)		Կրծողասպան միջոցը իրենից ներկայացնում է կիրառման համար պատրաստի, մոմից երկնագույն բրիկետներ, որոնք պարունակում են՝ ֆլոկումաֆեն (0,005%), 2-րդ սերնդի անուղղակի ազդեցության հակակոագուլյանտ: Օրգանիզմ ներթափանցելուց հետո այն իջեցնում է արյան մակարդելիությունը և մեծացնում է արյունատար անոթների թափանցելիությունը, արդյունքում առաջանում է ներքին և արտաքին արյունահոսություն, ինչն ավարտվում է ախտահարված օրգանիզմի մահով: Թունավորման ախտանշանների դանդաղ զարգացումը կանխում է կրծողների մոտ խայծի նկատմամբ վախի առաջացումը: Միջոցը պետք է պահել «ԹՈՒՆԱՎՈՐ Է» պիտակով տարայի մեջ՝ հատուկ հատկացված փակվող պահարանում (սեյֆ) կամ ռոդենտիցիդների պահպանման համար հարմարեցված պահեստներում՝ իրականացնելով ծախսի գրանցումը և նյութի մուտքագրումը: Միջոցի պահպանման ժամկետը՝ առնվազն 2 տարի: Փաթեթավորումը՝ 1 - 10 կգ փաթեթներով կամ տարաներով: Մատակարարման պահին անհրաժեշտ է պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն:	կգ			100.00	ք.Երևան, Դ.Մալյան 37	Պայմանագրի / Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում
4	33691420	Maxwell RSC ավտոմատ էքստրակտորի համար նախատեսված ՌՆԹ-ի անջատման և մաքրման հավաքածու		Maxwell RSC սարքի համար նախատեսված ՌՆԹ-ի անջատման և մաքրման գործընթացն իրականացնող հավաքածու (Maxwell RSC Viral Total Nucleic Acid Purification Kit): Հավաքածուն նախատեսված է առնվազն 48 նմուշի (կամ համապատասխան 2x48, 3 x 48) համար, աշխատում է տվյալ սարքի հետ, ավտոմատ նմուշից անջատում և մաքրում է ՌՆԹ և ԴՆԹ:	հատ (թեստ)			4,416.00	ք.Երևան, Դ.Մալյան 37	Պայմանագրի / Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում
5	33691423	Համաճարակաբանական պարոտիտի ախտորոշման ԻՖԱ հավաքածու		Համաճարակային պարոտիտի վիրուսի նկատմամբ IgM հակամարմինների որակական որոշման թեստ-հավաքածու (Siemens կամ համարժեքը): Մեթոդ՝ Իմունոֆերմենտային անալիզ (ELIZA): Ֆորմատ: առնվազն 96 որոշում (12x8 բջիջ) ներառյալ ստուգիչները: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 75% առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: Որակի սերտիֆիկատ՝ ISO 13485: Պահպանման պայմանները 2-8°C:	հատ			2.00	ք.Երևան, Դ.Մալյան 37	Պայմանագրի / Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում